ՇԱՀԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՃԵՄՅԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱՐԴԱՑՎԱԾ ԹԱԴԵՈՍ ԵՎ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ*

Այսօր երաւիրուած եմ փառաւոր այս հաւաքոյթին, օրուան տօնին առիթով, խօսելու ձեզի Քրիստոնեայ եկեղեցւոյ առաքելականութեան մասին, որ մեր եկեղեցւոյ պարագային, կ'արտայայտուի Առաջին Լուսաւորիչներու՝ Թադէոսի և Բարդուղիմէոսի յիշատակութեամբ, զոր կը կատարենք այսօր:

Խօսքը եկեղեցւոյ առաքելականութեան և մեր եկեղեցւոյ առաջին լուսաւորիչներու մասին է:

Քրիստոսի Առաքեալներու պարագային, պարզ պատկերացում մը ունենալու համար "առաքեալ" բառի ստացած յատուկ իմաստին, անհրաժեշտ է երթալ նախ եկեղեցւոյ պատմութեան սկիզբներուն, Երուսաղէմի մէջ: Քրիստոսի Համբարձումէն և Հոգեգալուստէն ետք, եկեղեցին առաքեալներն են և անոնց շուրջ բոլորուած համայնքը: Եկեղեցիին կեդրոնն է Երուսաղէմը: Տասնմէկին մէջ, Պետրոսը կը վայելէ մեծ հեղինակութիւն:

Պենտեկոստէի օրը, Իր Տէրը երիցս ուրացող, բայց այժմ Ս. Հոգիով զօրացած Պետրոսն է, որ կը խօսի իր բով կեցած տասնմէկին անունով, որ կը բարձրացնէ իր ձայնը իր Տէրը խաչող երեսներուն դիմաց, յանդուգն և անայլայլ բառերով: Ս. Հոգիի շնորհներով զօրացած, ան վկան է Քրիստոսի Յարութեան:

"Յարուցեալ Պետրոս հանդերձ մետասանիւքն, ամբարձ զձայն իւր՝ եւ խաւսեցաւ ընդ նոսա եւ ասէ ...զՅիսուս Նազովրեցի...մատնեալ ի ձեռաց անօրինաց՝ բնեռեալ ի փայտի սպանէք, զոր Աստուած յարոյց, լուծեալ զերկունս մահու..." (Գործք Առաքելոց. Բ. 14-24):

Հեթանոսութենէն դարձած քրիստոնեաներու և հրէութենէ դարձած քրիստոնեաներու միջև ծագած հարցերու լուծումին համար, անոր մօտ է որ կուգայ Պօղոս, երբ, առաջին անգամ ան կ'այցելէ Երուսաղէմ: Պետրոսը վճռական է. պէտք է կիրառել հրէական աւանդական օրէնքը հեթանոսութենէ քրիստոնէացած հաւատացեալներուն պարագային, գործադրելով օրէնքի բոլոր պահանջները: Գաղատացւոց գրած թուղթին մէջ, Պօղոս ինք կը բացատրէ թէ իր դարձէն երեք տարիներ ետք, ինք գնաց Պետրոսի մօտ համաձայնութեան մը գալու համար օրինապահութեան հարցի շուրջ: *"Ապա յետ երից ամաց եղի յԵրուսաղէմ տեսանել զՊետրոս. եւ եղէ առ նմա աւուրս հինգետասան"*: Պօղոս կը շեշտէ անմիջապէս թէ *"Զայլ ոք յառաքելոցն անտի ոչ տեսի, բայց միայն զՅակովբոս. զեղբայրն Տեառն"* (Գղտ. Ա. 18-19):

Հիմնուելով այս և մանաւանդ Քրիստոսի այն խօսքին վրայ թէ *"դու ես վէմ և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ" (Մատթ. ԺԶ 18)*, Կաթոլիկ աստուածաբանները և ընդհանրապէս արևմտեան պատմաբանները կը յայտարարեն Bertrand Baltmann-ի հետ թէ Հրէութենէ քրիստոնէացած եկեղեցիին համար գերագոյն հեղինակութիւններն են առաջին առաքեալները, իսկ հեթանոսութենէ դարձած եկեղեցիներուն համար՝ Ս. Պօղոսն է եկեղեցիին հեղինակութիւնը իր

---

* Կարդացվել է 1997 թ. նոյեմբերի 29-ին Վեհարանի հանդիսությունների դահլիճում Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների տոնի առիթով կազմակերպված միջոցառման ժամանակ (տե՛ս «Էջմիածին» ԺԱ-ԺԲ, էջ 217-219):

վրայ կեդրոնացուցած առաքեալը: Weizsäcker գերմանացի աստուածաբանը կը գրէ. "Նախնական համայնքին մէջ, Պետրոսն է առաջին մարդը. սա անհերքելի իրականութիւն է":

Գործք Առաքելոցի ԺԳ. գլուխին մէջ, Ղուկաս Աւետարանիչ, որ մօտ կը թուի ըլլալ Պողոսի, անոր անունով կ'արձանագրէ հետեւեալ յայտարարութիւնը.

"Այլ Աստուած յարոյց զնա ի մեռելոց, որ երեւեցաւ աւուրքք բազմաւք այնոցիկ, որ եկեալ էին ընդ նմա ի Գալիլէէ յԵրուսաղէմ. որք են արդ իսկ վկայք նմանոցիկ, որ եղեալ էին ընդ նմա ի Գալիլէէ յԵրուսաղէմ. որք են արդ իսկ վկայք են նորա առ ժողովուրդն": Այնտեղ, խօսքը բոլոր առաքեալներու խումբի մասին է և ըսուածը այն թէ՝ անոնք՝ առաքեալները վկաներն են Քրիստոսի յարութեան, Երուսաղէմի մէջ: Ուրեմն առաքեալներուն առաքելութիւնն է վկայել Քրիստոսի յարութեան, անոնց դիմաց, որոնք խաչեցին Քրիստոսը: Վկայ ըլլալու զօրութիւնն է, զոր ստացած են անոնք և ոչ տակաւին եկեղեցիի պետ ըլլալու իշխանութիւն:

Վերև յիշուած Պողոս առաքեալի տողերուն մէջ, ան կ'ըսէ թէ իր և Պետրոսի միջև եղած տարակարծութիւնը յարթելու համար, ան դիմած է Յակոբոս Տեառնեղբայր առաքեալին:

Եկեղեցւոյ պատմութեան եռչակաւոր եղիճնակ Harnack-ը և այլ եղիճնակաւոր մասնագէտներ, Յակոբոս Տեառնեղբայր առաքեալը կ'ընդունին ամենուն կողմէ ճանչուած քրիստոնեայ առաջին եկեղեցիին պետը:

Գործք Առաքելոցի եղիճնակ Ղուկաս Աւետարանիչը կը շեշտէ թէ՝ Երուսաղէմի եկեղեցիին համար, առաքեալներու ամբողջութիւնն է առաջին հաստատուած իշխանութիւնը՝ նուիրապետութիւնը: Այսու հանդերձ, կաթոլիկ աստուածաբանները չեն ժխտեր, թէ առաջին հալածանքի սկիզբին, երբ Քրիստոսի առաջին մեծ վկան Ս. Ստեփաննոս փառաբանեց զԱստուած իր մարտիրոսութեամբ, Պետրոս փախուստ տուած էր երազարակէն և առաջին քրիստոնեայ համայնքը ընտրած էր իր պետը, յանձին արդարն Յակոբայ:

Եւսեբիոսի Եկեղեցական Պատմութիւնը, Մարիանոսի Երուսաղէմի Պատմութիւնը, Միխայէլ Ասորին, Յունաց Դաւազանագիրք Երուսաղէմի Պատրիարքութեան, Սամուէլ Երիցու Ժամանակագրութիւնը և Վարք Սրբոցը, յիշելու համար միայն եկեղեցւոյ պատմութեան կարևորագոյն աղբիւրները, բոլորն ալ կը հաստատեն թէ Ս. Հոգիի գալուստէն ետք, "Սուրբն Յակոբոս Ա. առաքեալ՝ արդարն անուանեալ, որդի Կղէոպայ, եղբայր Տեառն կոչեցեալ, սա եկաց առաջին եպիսկոպոս յԵրուսաղէմ՝ ձեռնադրեալ յառաքելոցն զկնի գալստեան Հոգւոյն Սրբոյ...:

"Ի ժամանակի իշխանութեան սորա յամին 42 գլխատեցաւ ի Հերովդեսէ մեծն Յակոբոս առաքեալ որդին Զեբեդեայ, որոյ և գլուխ նորին բերեալ ի ձեռն երեշտակաց յանձնեցաւ Մարիամայ Աստուածածնին, որ ընդ Յակոբայ Տեառնեղբօր թաղեցին յԵրուսաղէմ ի կալուածի նորին իսկ Յակոբայ Տեառնեղբօր": Ուշագրաւ է որ պատմաբանները կ'ընդգծեն Յակոբոս Տեառնեղբօր առաքեալներէն ձեռնադրուած ըլլալու պարագան:

Ըստ Խորենացիի Պատմութեան, 42 թուին Երուսաղէմ եկած է "Հեղինէ դշխոյ Հայոց կինն Աբգարու մեծ արքայի" Խուրան Զօրավարի հետ, սովէն փրկած է տեղացի ժողովուրդը իր ողորմածութեամբ, կառուցանել տուած է մատուռներ Տիրոջ կեանքին հետ կապուած սրբատեղիներուն վրայ:

Վարք Սրբոցէն և աւելի ուշ աղբիւրներէ գիտենք նաեւ թէ. "Զկնի նահատակութեան Թադէոսի Առաքելոյ ի Հայս, մին յաշակերտաց նորա եղիշէ գայ յԵրուսաղէմ առ Յակոբոս Տեառնեղբայր և ձեռնադրեալ յեպիսկոպոս, դառնայ յԱղուանս": Տրուած թուականն է 50: Ուրեմն, առաքեալներէն ձեռնադրուած Յակոբոս Տեառնեղբայրն է, որ կը ձեռնադրէ իր աշակերտներէն մին, այս պարագային՝ Եղիշէն, զայն ուղարկելէ առաջ դէպի Աղուանք:

Հին Յայսմաւուրքէն գիտենք թէ "Սա այս Յակոբոս Տեառնեղբայր արդար առաքեալ կացեալ յեպիսկոպոսութեան ամս 30 նահատակի ի երէից գահավէժ արկեալ ի պարսպացն Երուսաղէմի յարևելից կուսէ և թաղի անդ յԵրուսաղէմ ի

կալուածի իւրում ի լերինն Սիոնի առընթեր մատռան, որ ի վերայ գլխոյ Սրբոյն Յակովբայ Զեբեդեանն կանգնեցաւ ի Հեղինեայ դշխոյէ Հայոց":

Այս եղելութիւններուն, Հայր Ղուկաս Ինճիճեան իր "Հնախօսութիւն Հայաստանի" գիրքին մէջ կ'աւելցնէ հետեւեալը. "Ի վերայ գերեզմանաց երկուց Յակոբեանց առաքելոցս շինեցաւ վանք հռչակաւոր ի սկզբան չորրորդի դարուն ի հրամանէ Տրդատայ մեծին արքային Հայոց՝ յանուն Սրբոց Յակոբեանց. և է սեպհական ազգիս հայոց մինչև ցայսօր":

Տարակոյսէ վեր է որ Քրիստոնեայ Եկեղեցիի պատմական առաքելականութիւնը կը սկսի Յակոբոս Տեառնեղբայր առաքեալէն և ոչ թէ Պետրոս առաքեալէն, որ այդ տարիներուն իր բացակայութեամբ կը փայլէր Երուսաղէմի մէջ:

Երուսաղէմի գիտնական համայնքին կողմէ ընդունուած պատմական նշմարտութիւն է, որ այսօրուան Ս. Յակոբեանց Մայր Տաճարը Հեթում Բ. Կիլիկիոյ Թագաւորի կողմէ վերակառուցուած Եկեղեցին՝ կը գտնուի հոն, ուր կար Յակոբոս Տեառնեղբօր տունը, առաջին և երկրատն հաւաքավայրը Քրիստոսի առաքեալներուն, ծերերուն և փոքր համայնքին, ուր գնաց Պօղոս հանդիպելու համար Եկեղեցիի պետին:

Այստեղ կը յառաջանայ մի հարց՝ կապուած առաքելականութեան հետ. Յակոբոս Տեառնեղբայրը առաքեալ չէ՞ր բայց հակառակ անոր եղաւ Եկեղեցւոյ պետ, ծեռնադրութիւնը ստանալէ հետ առաքեալներէն: Հետևաբար, կրնա՞նք ըսել թէ առաքելականութիւնը անկախ է նուիրապետական հանգամանքէն, կամ տեսնել այդ երևոյթին մէջ այլ կարգաւորութիւն մը, այն որ Եկեղեցիին առաքելականութիւնը հիմնադրումին մէջ է Եկեղեցիներու և ոչ թէ զանոնք կառավարելու իշխանութեան մէջ: Այլ խօսքով, առաքելականութիւնը քարոզչական իշխանութիւն է, զրանն նշմարտութեան անխախտ պահելու և տարածելու իշխանութիւնը:

Այ՞դ է որ կը հասկնանք երբ Հաւատամքի վերջաւորութեան կ'ըսենք Հաւատամք և ի մի միայն յընդհանրական և առաքելական սուրբ Եկեղեցի:

Աստուածաբանութեան մէջ, առաքելական մակդիրը գործածուած է երեք տարբեր իմաստներով.

ա. Եկեղեցին առաքելական է իբրև աւանդապահը առաքելական ուսուցումին.

բ. Եկեղեցին առաքելական է իր վարչական իշխանութեամբ.

գ. Եկեղեցին առաքելական է իր քահանայական իշխանութեամբ:

Հաւատամքի վերջին մասը որ կը վերաբերի Եկեղեցիի յատկանիշներուն, հայերէն խմբագրութեան մէջ, որ կը գործածուի ժամերգութեան և խորհրդաստարութիւններու ընթացքին, տարբեր է Արևմուտքի մէջ գործածուածէն. անոնք ունին.

և ի մի, սուրբ, յընդհանրական և յառաքելական Եկեղեցի: Տողին սկիզբը կը բացակայի "հաւատամք"բառը: Բանաձևը կը վերջանայ ըսելով.

խոստովանիմք մի մկրտութիւն, ի թողութիւն մեղաց:
Ակն ունիմք ի յարութիւն մեռելոց,
և ի կեանսն յաւիտենականս: *Ամէն:*

Հայ Եկեղեցիի հանգանակը կ'ըսէ.

Հաւատամք և ի մի միայն յընդհանրական և առաքելական սուրբ Եկեղեցի, ի մի մկրտութիւն, *յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց*: Ի յարութիւն մեռելոց, *ի դատաստան յաւիտենից, հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից* և ի կեանսն յաւիտենականս:

Առաջինին մէջ, այսինքն արևմտեան Եկեղեցիներու հաւատամքին մէջ, յիշուած են Եկեղեցիի չորս հիմնական յատկանիշները, որոնցմէ հետ՝ մկրտութիւնը, յարութեան յոյսը և յաւիտենական կեանքի ակնկալութիւնը: Մեր Եկեղեցիին մէջ գործածուող Հաւատամքին մէջ կը յիշուին չորս յատկանիշները, տարբեր շարադասութեամբ մը, որ կը սկսի Եկեղեցիի մէկութեամբ և կը շարունակուի յիշելով ընդհանրականութիւնը, առաքելականութիւնը և սրբութիւնը, տալով այն տպաւորութիւնը թէ Եկեղեցւոյ սրբութիւնն է միւս յատկանիշներուն պսակը: Արևմտեան

Եկեղեցիներուն մէջ, շարքը կը սկսի նոյն մէկութենէն, որուն կը յաջորդէ սրբութիւնը, ընդհանրականութիւնը և կ'եզրակացուի առաքելականութեամբ: Պատահականութի՞ւն թէ դիտաւորութիւն, դժուար է ըսել: Սակայն պարզ է որ մինչև այսօր, Հռոմի Եկեղեցին, երբ կ'ըսէ Եկեղեցի, կ'ըսէ Ս. Պետրոս առաքեալ, այսինքն առաքելականութիւն, և երբ կ'ըսէ Ս. Պետրոս կ'ըսէ պապականութիւն և երբ կ'ըսէ պապականութիւն, կ'ըսէ անսխալականութիւն և երբ անսխալականութիւնը կը պահէ ինքզինքին, անխուսափելիօրէն կը ստիպուի դուրս հանել Քրիստոսի Եկեղեցիէն միւս բոլոր Եկեղեցիները:

Թէ Քրիստոս իր առաքեալներուն տուաւ իշխանութիւններ, անուրանալի է: Դիմենք Աւետարաններուն, անգամ մը ևս կարդալու համար թէ Յիսուս ինչպէս ընտրեց տասներկուքը և ինչ իշխանութիւններ տուաւ անոնց:

Մտթ. Ժ. 2-4 կը յիշուին տասներկուքը՝ զոյգ զոյգ

եւ առաքելոցն երկոտասանից՝ էին անուանք այսոքիկ:

Առաջին՝ Սիմովն անուանեալն Պետրոս, եւ Անդրէաս եղբայր նորա:

Յակովբոս Զեբեդեայ, եւ Յովհաննէս եղբայր նորա.

Փիլիպպոս, եւ Բարթողոմէոս.

Թովմաս եւ Մատթէոս մաքսաւոր.

Յակովբոս Ալփեայ, եւ Ղեբբէոս՝ որ անուանեցաւն Թադդէոս

Սիմովն Կանանացի և Յուդա Իսկարիովտացի, որ և մատնեեցն զնա:

Մրկ. Գ. 16-18-ի մէջ կան տարբերութիւններ:[1] Այստեղ կարծէք թէ շարքը կազմուած է նկատի ունենալով իւրաքանչիւրի մոտիկութիւնը Յիսուսի: Կը սկսի Պետրոսի անունով, անուն մը զոր տուած է իրեն նոյն ինքն Յիսուս, փոխանակ անոր բուն անունին, որ է Սիմոն: Կը հետևէին Յակոբ և Յովհաննէս, որոնց անուանին մեր Տէրը կցեց "Որդիք Որոտման" կոչումը: Իսկ Սիմոնի եղբօր՝ Անդրէասի անունը կը յիշուի չորրորդ տեղը, որուն կը հետևի Փիլիպպոս եւ Բարթողոմէոս զոյգը և կը շարունակուի յաջորդ զոյգով՝ Թովմաս եւ Մատթէոս, ապա՝ Յակովբոս Ալփեայ և զԹադդէոս, ապարտելու համար Սիմովն Կանանացի անուններով:

Ղկս. Զ. 13 -ին[2] մէջ յիշուած ցանկին սկիզբը կը գտնենք յատկանշական խօսք մը կոչեաց զաշակերտսն իւր եւ ընտրեաց ի նոցանէ երկոտասանս. զորս եւ առաքեալս անուանեաց:

Գործք Առաքելոցի մէջ, Ղուկաս կը սկսի իր գիրքը նոյն յիշատակութեամբ՝

1 Զբանն Առաջին զոր արարի վասն ամենայնի, ո՛ Թէոփիլէ, զոր սկսաւ Յիսուս առնել եւ ուսուցանել.

2 մինչեւ Հաւրն պատուիրելոյ առաքելոցն ի ձեռն Հոգւոյն Սրբոյ, զորս ընտրեացն եւ վերացաւ:

Արդէն Մատթէոս անունները տալէ առաջ, այսպէս գրած էր.

1 եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսն իւր, եւ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա, եւ բժշկել զամենայն ցաւս եւ զամենայն հիւանդութիւնս (Ժ 1):

---

[1] Եւ եդ անուն Սիմովնի՝ Պետրոսի. 17 * եւ Յակովբու Զեբեդեայ՝ եւ Յովհաննու եղբարն Յակովբայ՝ եդ նոցա անուանս Բանեռգէս, որ է՝ Որդիք Որոտման, 18 * եւ զԱնդրէաս, եւ զՓիլիպպոս, եւ զԲարթողոմէոս, եւ զՄատթէոս զմաքսաւորն, եւ զԹովմաս, եւ զՅակովբոս Ալփեայ եւ զԹադդէոս եւ զՍիմովն Կանանացի:

[2] Ղկս. Զ. 19
Եւ իբրեւ այդ եղեւ՝ կոչեաց զաշակերտսն իւր, եւ ընտրեաց ի նոցանէ երկոտասանս. զորս եւ առաքեալս անուանեաց: Զսիմովն՝ զոր եւ Պետրոսն անուանեաց, եւ զԱնդրէաս զեղբայր նորին եւ զՅակովբոս, եւ զՅոհաննէս, եւ զՓիլիպպոս, եւ զԲարթողոմէոս, եւ զՄատթէոս, եւ զԹովմաս, եւ զՅակովբոս Ալփեայ, եւ զՍիմովն՝ զկոչեցեալն Նախանձայոյզ, եւ զՅուդայ Յակովբայ եւ զՅուդա Իսկիովտացի՝ որ եղեւ իսկ մատնիչ:

Այս առթիւ, երեքին մօտ նոյն բառերը կը գործածուին. նախ՝ Կոչեց իր աշակերտները, ապա՝ ընտրեց երկոտասանը և իշխանութիւն տուաւ անոնց, իշխանութիւն՝ մաքրելու մարդիկը չարի ներգործութենէն և իրենց ախտերէն: Նախ կոչեց բոլորին և շատերէն ընտրեց հիւրերը: Յետոյ՝ Մատթէոս կ'ըսէ. առաքեաց զնոսա, որմէ յետոյ՝ պատուիրեաց նոցա: Առաջինը, որ արմատն է «առաքեալ» բառին կը նշէ անոնց ընելիք գործին բնոյթը. իսկ երկրորդը՝ իրենց մէջ արթնցող նոր մարդուն բնոյթը: Գործը քարոզութիւնն է, իսկ նոր անձնաւորութեան բնոյթը՝ ամբողջական նուիրումն. ձրի առէք և ձրի տուք այս է անոնց տրուած տեղուանական երահանգը: Կոչուած և ընտրուած առաքեալը ան է, որ կը երաւիրուի ի սկզբանէ և կ'ընտրուի յորովայնէ, ինչպէս կ'ըսէ շարականը, ամբողջական նուիրումով շարունակելու համար մարմնացեալ Աստուծոյ գործը այս երկրի վրայ:

Յովհաննու Աւետարանին մէջ միայն, չկայ տասներկուքի ընտրութեան պատմութիւնը և ցանկը. սակայն կայ գեղեցիկ պատմութիւնը Քրիստոսի երևումին Տիբերիոյ ծովուն եզերքը. իր յարութենէն ետք. որպէսզի ծուկերու որսորդութեան երաշխով յայտնուի առաքեալներու խումբի մը. Սիմոն Պետրոս, Թովմաս՝ "անուանեալն երկուորեակ" և Նաթանայէլ "որ ի Կանայ Գալիլիացւոց և որդիքն Զեբեդեայ" (որպէսզի չյիշէ ինքզ իր անունը) և այլք աշակերտաց անտի երկու":

Այս երևումէն յետոյ, կը սկսի Յիսուս եարցնել Պետրոսի երեք անգամ եթէ "սիրե՞ս զիս", որպէսզի բնորոշէ առաքելութիւնը, որուն կոչուած էր ինքը Պետրոս. ըլլալ բարի հովիւը , որ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց: Ասոնք են առաքեալին յատկանիշները. ընտրեալ և կոչեցեալ ըլլալ. և նուիրուիլ, իբրև հովիւ բարի իրեն յանձնուած հօտի հոգածութեան՝ ամբողջական նուիրումով: Որքա՜ն հեռու հաւակնոտ իմաստէն, որ կը տրուի այսօր "պետրոսականութեան":

Տասներկուքէն ետք, երբ եկեղեցին սկսաւ ընդգրկել ոչ-երէաներ, Պօղոս առաքեալի քարոզութեամբ, «առաքեալ» հասկացողութիւնը ընդարձակուեցաւ և սկսաւ ընդգրկել եկեղեցական սկզբունքներ, առաջը առնելու համար սխալ ուսուցումներու տարածումին: Առաքեալը եղաւ նաև ուսուցանող.

Բ. Կորնթ. Գ. 4 *Յոյս մի այսպիսի ունիմք ի Քրիստոսի առ Աստուած. իբր ոչ եթէ անձամբ բաւական ենք խորհել ինչ իբրեւ ի մէնջ. այլ բաւականութիւնն մեր՝ յԱստուծոյ է, որ եւ բաւականս արար զմեզ՝ պաշտաւնեայս Նորոց կտակարանացս, ոչ գրով, այլ հոգւով. զի գիրն սպանանէ, այլ հոգին կեցուցանէ:*

Յիսուս արդէն ըսած էր իր առաքեալներուն. Մատթ. ԻԸ. 18 "Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս եւ յերկրի. Որպէս առաքեաց զիս Հայր եւ ես առաքեմ զձեզ: Գնացէք այսուհետեւ՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հաւր՝ եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ":

Յիսուս փոխանցած էր նաև իր առաքեալներուն քահանայական իշխանութիւնը.

Յովհ. Ի. 21 *"Ողջոյն ընդ ձեզ, որպէս առաքեաց զիս Հայր իմ, եւ ես առաքեմ զձեզ: Եւ զայս իբրեւ ասաց, փչեաց ի նոսա՝ եւ ասէ. Առէք Հոգի Սուրբ. եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի նոցա. եւ եթէ զուրուք՝ ունիցիք, կալեալ լիցի":*

Հոգեգալուստէն ետք, առաքեալները ունին իրենց տրուած իշխանութեան գիտակցութիւնը և անով զօրացած կը կատարեն իրենց առաքելութիւնը ամենայն իմաստութեամբ, կը կանգնին ամբողջ աշխարհին դիմաց և կը խօսին ինչ որ տրուած է իրենց Ս. Հոգիէն: Անոնք պատրաստ են հրաժարելու կեանքէն, հաւատարիմ մնալու համար իրենց յանձնուած առաքելութեան:

Առաքեալը աւետարանիչն է բանին նշմարտութեան, իր մէջ գոյացած այն փորձառութենէն որ Յիսուսի Քրիստոսի յայտնութիւնն է իրեն.

Գաղտ. Ա. 11 *Ցուցանեմ ձեզ եղբարք զԱւետարանն, որ աւետարանեցաւ յինէն. զի ոչ է ըստ մարդոյ. քանզի եւ ոչ ես ի մարդոյ առի, եւ ոչ ուսայ յումեքէ, այլ ի յայտնութենէն Յիսուսի Քրիստոսի:*

Պօղոսի բացատրութեամբ, ինք առաքեալ է, որովհետև կոչուած է ըլլալու առաքեալ և զատորոշուած՝ Աստուծոյ բարի լուրը աւետելու իր քարոզութեամբ.

Հում. Ա. 1 "Կոչեցեալ առաքեալ, որոշեալ յԱւետարանն Աստուծոյ":
Աստուծոյ կողմէ կոչեցեալներէն էին երկու այն առաքեալները, որոնց տօնը կը կատարենք այսօր: Եթէ վերադառնանք երեք համեմատական Աւետարաններուն, անոնց անունները կը գտնենք երկոտասանից ցանկերուն մէջ:
Մատթէոսի ցանկին մէջ՝ Թադէոսը կոչուած է Ղեբբէոս, իսկ Մարկոսի Աւետարանին մէջ՝ Թադդէոս, միչդեռ Ղուկասի մօտ՝ Յուդայ Յակոբայ:
Երկու պարագաներու, երբ Մարկոս կը գրէ Յակոբոս Ալփեայ և Ղուկաս՝ «Յուդայ Յակոբայ, ըսել կ'ուզեն Յակոբ որդի Ալփեայ և Յուդա որդի Յակոբայ: Վերջինիս մասին, տեսնենք թէ Մատթէոս կուտայ այլ անուն մը Ղեբբէոս, սակայն յիշելով, որ ան անուանեցաւ Թադէոս:
Ուրեմն տասնմէկերորդ առաքեալի մասին, որ եղած է Հայոց առաջին առաքեալը ունինք հոս անունը՝ Յակոբ և երկու անուններ. Յակոբի որդին՝ Յուդա և Թադդէոս, որու նախկին անունն էր Ղեբբէոս:
Յուդա-Թովմաս Յակոբեանը, որ կայ նաև Յովհաննու Աւետարանին մէջ (ԺԱ. 16), երկրորդակ եղբայրը Թադէոսի, կ'երևի Առաքելոց կանոններուն մէջ իբրև ուղարկուած ի Հնդիկս և ամենայն գաւառք որ շուրջ զնովաւ են, մինչև ի ծովն վերջին, նոյն կանոններուն մէջ՝ անոր երկրորդակ եղբօրը կը սահմանուին Ուռհա և ամենայն քաղաքք որ շուրջ զնովաւ, Մծբին և Արաբք և սահմանակիցք Միջագետաց, Հայք և ամենայն հիւսիսի և հարաւ:
Նոյն կանոններուն մէջ, ան կը յիշատակուի իբրև մի յերկոտասան առաքելոցն:
Փաւստոս Բիւզանդացի պատմիչը, կաթողիկոսներու յաջորդականութեան սկիզբը կը նշէ Թադէոս Առաքեալը, իբրև հիմնադիրը Կաթողիկոսական Աթոռին, զոր կ'որակէ Թադէական Աթոռ:
Սոփերք Հայկականքի մէջ (Սոփերք, հտ. Ը. 11) կը յիշատակուի "Արտազ գաւառի Շաւարշան գիւղ ուր էին հովոց գետինքի թագաւորացն Հայոց: Սանատրուկ, Սանդուխտ Լայլն: Սամուէլ իշխան, Զարմանդուխտ": կը հետևցուի այս յիշատակութենէն, թէ այնտեղ քարոզած և նահատակուած է Հայոց Կաթողիկոսութեան հիմնադիր Թադէոս առաքեալ, որուն պատճառով Աթոռը կոչուած է նաև Արտազի Աթոռ:
Թադէոս առաքեալի մասին գիտենք թէ ան նախ քարոզեց Կապադովկեայ և ծեռնադրեց այնտեղ Թէոփիլոսը և անկէ մտաւ Հայաստան: Լուսաւորիչը ըրաւ եպիսկոպոս ճամբան, ծեռնադրուած ըլլալու համար առաքեալի յաջորդներէն:
Գրիգոր Տաթևացին կը գրէ հետևեալը. "Կենսաբուխ սուրբ Աւետարանն զԹադէոս առաքեալն մեր յերկոտասանից ասէ, Ղեբէոս որ անուանեցաւ Թադէոս...ոմանք եօթանասնից ասեն, զի եօթանասուն աշակերտացն գլուխ և վարդապետ էր (Տաթ., Գիրք Հարցմանց 549): Ուրեմն Տաթևացին կը պատասխանէ անոնց, որոնք Աւետարաններու բացայայտ վկայութեան կը հակադրուին Թադէոսը նկատելով եօթանասնից էն մին և ոչ երկոտասաններէն, թէ Թադէոս էր նաև "եօթանասուն աշակերտացն գլուխ և վարդապետ":
Բարթողիմէոսի մասին հարց չկար, մինչև որ երատարակուեցաւ Ս. Գրոց "Էկիւմենիք" թարգմանութիւնը: Համեմատական երեք Աւետարաններուն մէջ՝ տասներկուքի շարքին յիշուած է Բարթողիմէոս առաքեալը, Փիլիպպոսի անունին հետ շաղկապուած՝ վեցերորդ անունը: Ըստ եկեղեցական հնագոյն աւանդութեան, Բարթողիմէոս կը նոյնանայ Յովհաննու Աւետարանին մէջ յիշուած Նաթանայէլի հետ: Մինչև այսօր, Կանա գիւղին մէջ, Նազարէթի մօտ, ցոյց կը տրուի անոր Գերեզմանը և տունին տեղը, որոնց վրայ կանգնած են Լատինական և Յունական եկեղեցիներ: Հոն կուգան բազմաթիւ ուխտաւորներ, յարգելու համար յիշատակը Առաքեալին, որու մասին Յովհաննէս Աւետարանիչ կը գրէ.
"Գտանէ Փիլիպպոս զՆաթանաէլ, եւ ասէ ցնա. Զորմէ գրեաց Մովսէս յարէնսն, եւ մարգարէքն՝ գտաք զՅիսուս զորդի Յովսեփայ ի Նազարեթէ: Ասէ ցնա Նաթանաէլ. Իսկ ի Նազարեթէ՝ մա՞րթ ինչ իցէ բարւոյ իմիք լինել: Ասէ ցնայ Փիլիպպոս. Եկ եւ տես: Իբրեւ ետես Յիսուս զՆաթանաէլ զի գայր առ նա, ասէ

վասն նորա. Ահա արդարեւ Իսրայէլացի, յորում նենգութիւն ոչ գոյ: Ասէ ցնա Նաթանաէլ. Ուստի՞ ճանաչես զիս: Պատասխանի ետ Յիսուս՝ եւ ասէ ցնա. Մինչչեւ էր Փիլիպպոսի կոչեցեալ զքեզ՝ զի էիր ի ներքոյ թզենւոյն, տեսի զքեզ: (Յովհ. Ա. 45): Ս. Գրոց ֆրանսերէն լեզուով եղած թարգմանութեան մէջ, որուն պատրաստութեան մասնակցեցաւ գիտնականներու "էկիւմենիք" խումբ մը, էջատակին գրուած է Նաթանայէլի մասին. "Որոշ աւանդութիւններ նոյնացուցած են զայն Բարթողիմէոսի, սակայն անհիմն կերպով": Զարմանալի հակասութիւն նոյն Աւետարանին մէջ գրուածին (Յովհ. ԺԱ. 2): Յիսուս, իր յարութենէն ետք, որպէսզի ծուկերու որսորդութեան հրաշքով յայտնուի առաքեալներու խումբի մը, կ'երևի խումբի մը՝ Տիբերիոյ լիճին եզերքը: Յովհաննէս Աւետարանիչը կը յիշէ. *"Սիմոն Պետրոս, Թովմաս՝ "անուանեալն երկուորեակ"* և Նաթանայէլ *"որ ի Կանայ Գալիլիացւոց և որդիքն Զեբեդեայ և այլք աշակերտաց անտի երկու"*: Տասներկուքին մէջ, Կանանացի աշակերտը Բարթողիմէոսն է և անոր համար է որ եկեղեցւոյ աւանդութիւնը նոյնացուցած է երկու անունները Բարթողիմէոսի անձին մէջ:

Այսօրուան տօնակատարութեամբ, մենք չենք կրնար զսպել մեր եպարտութեան արդար զգացումը որ Աստուծոյ "փոքրիկ հօտը" հովուած են երկու Առաքեալներ և թէ անոնց արեան աղբիւրէն հոսած է քրիստոնէական մեր հաւատքը: Սակայն, երբ կը հպարտանանք միայն, կը մեղանչենք անոնց արեան դէմ, որովհետև այդ արիւնը կենդանի աղբիւր կը մնայ այն ատեն միայն, երբ առաքելականութիւնը եսակնանք նաև իբրև պարտաւորութիւն մը, դրուած մեր ուսերուն, որ շարունակենք մաքուր պահել յարութեան յոյսը, անխախտ պահել մեր հաւատարմութիւնը առաքելական Ս. Աթոռին, կենսունակութեան նոր թափ մը տալ մեր քարոզութեան և բարձր պահել Ս. Խաչը՝ դրօշը մեր փրկութեան: